«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 5; 17.01.2025թ.

1. Ռեկտորատի նախորդ նիստի որոշումների կատարողականի վերաբերյալ

1.1. Ընդունել ի գիտություն:

1.2. ՀԱԱՀ 95-ամյա հոբելյանական միջոցառումների կազմակերպման համար ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

- Լուսինե Մնացականյան՝ աշխատակազմի ղեկավար,
- Սյուզաննա Փիլոսյան՝ ՀԱԱՀ թանգարանի վարիչ,
- Անի Խուդավերդյան՝ ՀԱԱՀ «Հասուն հասկ» էլեկտրոնային պաշտոնաթերթի խմբագիր,
- Հայկ Կիրակոսյան՝ Ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի վարիչ,
- Թոռնիկ Ալիյան՝ ՈՒԽ նախագահ,
- Զարուհի Հովեյան՝ ՈՒԳԸ նախագահ,
- Դավիթ Մելքումյան՝ ՈՒԽ անդամ,
- Նարեկ Ջամալյան՝ ՈՒԽ անդամ:

2. Համալսարանում ուսումնական պարապմունքների կազմակերպման ընթացքի, խնդիրների և բարելավման ուղիների վերաբերյալ

2.1. Ընդունել ի գիտություն:

2.2. Հանձնարարել Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի տնօրեն Վ. Վարդանյանին մինչև ս.թ. հունվարի 22-ը հանդիպում կազմակերպել քոլեջում դասավանդող դասախոսական անձնակազմի հետ:

2.3. Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի 2024-2025 ուստարվա առաջին կուրսի ուսանողներին թույլատրել օգտվելու առաջին կիսամյակի առարկաների ամփոփիչ քննության/ստուգարքի երեք մուտքի հնարավորությունից:

2.4. ՀԱԱՀ միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ստորաբաժանումների հաստիքացուցակները 2024թ. մայիսի 22-ին ընդունված «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» թիվ ՀՕ-250-Ն ՀՀ օրենքի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով ձևավորել հանձնաժողով հետևյալ կազմով.

- Մ. Վարդանյան՝ իրավաբանական բաժնի պետ (նախագահ),
- Արմեն Աղասարյան՝ ՀԱԱՀ ուսումնական գործընթացի կառավարման վարչության պետ,
- Վարդան Վարդանյան՝ Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի տնօրեն,
- Մերի Գրիգորյան՝ ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար,
- Հերմինե Մանուկյան՝ ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն,

- Գագիկ Խաչատրյան՝ ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար,
- Մերի Յոլյան՝ ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղի ուսումնական մասի վարիչ,
- Գայանե Գաբրիելյան՝ Շիրակի ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան գյուղատնտեսական քոլեջ մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար:

2.5. Հանձնարարել հանձնաժողովին ուսումնասիրել 2024թ. մայիսի 22-ին ընդունված «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» թիվ ՀՕ-250-Ն ՀՀ օրենքը և մինչև փետրվարի 15-ը ներկայացնել կանոնակարգի նախագիծ:

2.6. ՀԱԱՀ ուսումնական ստորաբաժանումներում ըստ ամբիոնների կազմել ինքնուրույն աշխատանքների կատարման, հանձնման ու պաշտպանության ժամանակացույց:

2.7. 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակի հեռակա ուսուցման կուրսերում առաջացած խնդիրները կարգավորել հետևյալ կերպ.

2.7.1. 2024-2025 ուստարվա հեռակա ուսուցման առաջին կուրսերի ուսանողներին հնարավորություն ընձեռել վճարովի հիմունքներով լրացնել առաջին կիսամյակի ուսումնական պլանում ներառված առարկաների մի մասի 50%-ից ավելի անհարգելի բացակայությունները՝ մասնակցելով տվյալ առարկաների լրացուցիչ կազմակերպված պարապմունքներին և հանձնել քննություններ, պայմանով, որ չհանձնված առարկաների կրեդիտային պարտքը լինի 8 կրեդիտից ոչ պակաս և 12 կրեդիտից ոչ ավել:

2.7.2. Յուրաքանչյուր լրացվող ժամի համար ուսանողը վճարում է 5000 ՀՀ դրամ գումար, մասնակցում լրացուցիչ կազմակերպված պարապմունքներին և ստանում քննությունը հանձնելու հնարավորություն՝ մինչև 2025 թվականի փետրվարի 14-ը:

2.7.3. Քննությունը կազմակերպվում է առնվազն երեք անդամից կազմված հանձնաժողովով և անցկացվում քննական առարկան դասավանդող ամբիոնում:

2.8. Ինքնուրույն աշխատանքների օրինակելի ղեկավարման ու գնահատման համար ՀԱԱՀ ներքոհիշյալ աշխատակիցներին ներկայացնել ֆինանսական խրախուսման 20 հազարական ՀՀ դրամի չափով.

- Քեշիշյան Գևորգ՝ Տվյալագիտության ամբիոնի դոցենտ,
- Գրիգորյան Մանուշակ՝ Տվյալագիտության ամբիոնի դոցենտ,
- Ավետյան Թամարա՝ Ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ:

3. Գիտական կենտրոնների և ՈՒՓՏ-ի հետ համալսարանի ամբիոնների գիտաուսումնական կապի, արդյունավետության և խնդիրների վերաբերյալ

Հանձնարարել ուսումնական ստորաբաժանումների ղեկավարներին քննարկել և մինչև ս.թ. հունվարի 31-ը ներկայացնել առաջարկություններ ուսումնական պլանները ՀԱԱՀ գիտական կենտրոն մասնաճյուղերի, ՈՒՓՏ-ի աշխատանքային ժամանակացույցին հարմարեցնելու, համագործակցությունն ընդլայնելու վերաբերյալ:

4. 2024-2025 ուստարվա առաջին կիսամյակում համալսարանի էլեկտրոնային կառավարման e-Buh համակարգում ծագած խնդիրների վերաբերյալ

4.1. Ընդունել ի գիտություն:

4.2. Հանձնարարել ՈԳԱԿ տնօրեն Ա. Դաշտոյանին ու ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի դեկան Ա. Սիմոնյանին սեղմ ժամկետում կարգավորել Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի «Տրանսպորտային և լոգիստիկ համակարգեր» կրթական ծրագրում առկա կրեդիտերի սխալը:

4.3. Հանձնարարել ստորաբաժանումների ղեկավարներին դիպլոմի միջուկում հայերեն և անգլերեն տեքստերի տակ նախատեսել մեկ ստորագրություն:

5. Լուսինե Ռաֆիկի Հովհաննիսյանի ուսման վարձավճարի զեղչման հարցի վերաբերյալ

Ագրոնոմիական ֆակուլտետի «Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա» կրթական ծրագրի հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ուսանողուհի Լուսինե Ռաֆիկի Հովհաննիսյանի 2024-2025 ուստարվա ուսման վարձը զեղչել 20%-ով:

6. Սուսաննա Սերգոյի Կոծինյանի ուսման վարձավճարի զեղչման հարցի վերաբերյալ

Ագրոնոմիական ֆակուլտետի «Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա» կրթական ծրագրի հեռակա ուսուցման 2-րդ կուրսի ուսանողուհի Սուսաննա Սերգոյի Կոծինյանի 2024-2025 ուստարվա ուսման վարձը զեղչել 20%-ով:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ՉԱՔՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ